

Упражнение
Горизонтальный блок

891.71

2h-85

17 JUL 2006
25 NOV 2010

ՀԱՊԱՀԱԿԱՆ

ԼՈՒՍՎԱՐԱԽԹՅԱՆ ԳԼՈՒԽՈՐ ՎԱՐՉՈԽՅՑՈՒՆ
№5 ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՆԱՑԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ Ն 5

ԱՐԲՈՒՅՈՎ

ԳՅՈՒՂԹՂԹԱԿՑՈՒՅԻ ԱՆԱՆ

ՊԻԵՍ Յ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

ՓՈԽԱԴՐԵց՝ ԽԵԿՈ Ա.ՊԵՐ



ՊԵՏՈՒԱՆԵ ՀՐՈԱՐՈՒԿՉՈՒԹՅՈՒՆ

ՃՐԵՇՎ. 0.6 - 1928

89171
Q-85

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՒԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
№ 5 ԲԱՆԳՅՅՈՒՂ. ԹԱՏՐՈՒ № 5

391.71
Վ-85

մշր

Մ. ԱՐԲՈՒԶՈՎ

ԳՅՈՒՂԹՂԹԱԿՑՈՒՅԻ ԱՆԱՆ

Յ Գործողությամբ

Փոխադրեց՝ Խնկո ԱՊԵՐ

15.10.6
20-5



22.02.2013

9981

Հր. № 867 Գրառեպվար № 1050 (բ) Տերաժ 1500
Պետհըստի առաջին տպարան Վաղարշապատում
Պատվեր № 254

265
46

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

- ԱՆԱ. — Գլուղթղթակից, 25 տարեկան.
Ա.Վ.Ռ. — Երա ամուսինը. հարուստ գյուղացի, 35 տարեկան.
ՄԱՐԹԱ. — Ավոյի մալրը, զոորա պառավ, 60 տարեկան.
ԲՈԴՈԼ. — Գլուղխորհրդի նախագահ.
Դ Ա.ՍՊԱՐ. — Կոռպերատիվի վարչության նախագահ.
ՇՈՂԵՐ. — Կարմիր բանակայինի այրի.
ԲԵՆՌ. — Կոռպերատիվի հրահանգիչ.
ՀԱՄՈ. — Կոմսոմոլի բջիջի քարտուղար:
Գլուղպացիներ, աղջկներ, պատանիներ:

- I Գործողությունը՝ նոյեմբերին.
II Գործողությունը՝ հունվարին.
III Գործողությունը՝ մայիսին:

ԱՐԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Տանը կից ոթախ, լավ յեվ մաքուր: Աննան, պառավը յեվ
միքանի հարս ու աղջիկ նստած մանում են:

ԱՆՆԱ.—Ժամանակն է, վոր մեր վորսորդները տուն գան (Պատուհանից դուրս է նայում): Գիշեր, եսպես ել մութ գիշեր:
(Յերգում ե: Ամպել է բոն չի գալիս, մքնել է տուն չի գալիս
Անտեր մեա ես բարձր, առանց յար քուն չի գալիս): Եսպես ել
գիշեր, մարդու սիրուր մի տեսակ և լինում:

ՇՈՂԵԲ.—Ել դու, Անո, դու հա ավչի Ավուիդ ես կանչում: Յես
հմ, վոր կանչելու մարդ չունեմ: Աչքից ել եմ պրծել աչ-
քացավից ել Ա՛խ, իմ Գևորգը, խաչած զերեղմանի յել չար-
ժանացավ, իմ ձեռքով չթաղեցի նրան: Նա յել վորսորդ
եր... Կարմիր Փրոնստ կանչելիս նա կամավոր գնաց: Յես
չեյի նրան խնդրողը, յս չեյի նրան աղաչողը, բայց նա՝ չե,
վոր չե: Հողը գլխիս քաշեց:

ԱՆՆԱ.—Ազատության համար զոհվեց:

Ի ԱԴՐԻԿ.—Ի՞նչ ես քեզ տանջում: Յետ չես բերի: Յերգենք զո-
րավար սուրբ Գևորգի յերգը:

ՄԱՐԹԱ.—Յերգեք, յերգեք, Շողերին մխիթարեք, յես ել պա-
ռավս, կլսեմ: (Յերգում են Զորավար սուրբ Գեվորգի յերգը:
Նոգերը տիտր՝ նստած ե, զիսակար):

ՄԱՐԹԱ.—Դու մի վշտանա, Շողեր: Զինվորը հեշտ և մեռնում,
քան թե հասարակ մահկանացուն: Հենց վոր զինվորն ընկ-
նում է, իսկուն վրա յե հասնում սուրբ Գևորգը՝ սպիտակ
ձին հեծած: Առնում ե նրա հոգին ձեռքի վրա և թռչում ե
յերկինք, բայց ձին հսպես ե թուչում, վոր վոտների տակեց
կալծեր են ցալտում և ուղիղ գեղի հայր տատծու աթոռը. իսկ
այստեղ տիրամայրը, վողորմած պաշտպանը, ընկածի գլխին

վոսկե պսակ և դնում: Ո՞խ, ո՞խ, վոր չես մտածում, նախանձում ես այդ բանին, մենք եստեղ բոլորս մեղքերի մեջ կորած, նա դրախտի վայելքներն են ճաշակում: Թող վիշտը սիրտդ չուտի, մեղք ես, ուղժում ես, Աննալին հարցրու, նա գրագետ ե (դեպի Աննան): Միթե յես ճիշտ չեմ ասում: Հոհեքալի չի:

ԱՆՆԱ.—(Խուսափելով): Հեքիաթն ել լավ բան ե, յեթե միսիթարվելու համար ե:

ՄԱՐԹԱ.—Ինչպէս, եղ հեքալի մի ասում աթոռն ել հեքալի ե:

ՄԱՐԹԱՆ.—Հեքալի մասին յես լսել եմ զրքից: Եղ գիրքն ել հոսել ե մեզ պապի պապերից:

ԱՆՆԱ.—Դրանք գատարկ զրքեր են:

ՄԱՐԹԱ.—(Վեր բռչելով). Այ դու... Ի՞նչ ե ասում: Իսկ ձեր նոր զրքերն ի՞նչ են: Ի՞նչ կա նրանցում:

ԱՆՆԱ.—Են կա, վոր վոչ մի դորավար սուրբ Գևորգ չի լիդել: Եղ հեքալի մի չաշվենք, թե յեղել ե: Յեղած կիխի մի հասարակ մարդ, մի քաջ և բարի զինվոր: Անա և մարդիկ փառաբանել են նրան և դարձրել սուրբ: (Աշխուժանալով): Այ, թե ի՞նչ եմ ասում: Յեթե Գևորգին ուղենանք գովարանել և եղ կողմից մեր տեր-Մաթալին համոզենք, նա Գևորգին սրբոց դասը կդասի, նրա պատկերի առաջ բուրգառ կդցի, խունկ կծխի. միայն նրա բուկը տեղն արա, խաչամբուրը, աշխամբուրը՝ անպակաս: Դրանից գենը, ել դու պըծար: Զինվոր Գևորգը կդառնա Զորավար անհաղթ սուրբ Գևորգ, աղքի, հավատի, յեկեղեցու համար մարտիրոս: Եղպես ել կանց-նի թոռից թոռ: Դեռ միքանի վոսկոր ել բամբակով կփառթաթեն և կասեն՝ սրբի մասունքներն են: Մեր վանքերի և յեկեղեցիների բոլոր սրբերը հոգեորականների մոգոնած բաներն են՝ միայն փորի համար, փորի, փորի, փորի:

ԱՂՋԻԿՆԵՐ.—Հա, հա, հա: Եղպես բան կլինի: Սա ի՞նչ ե ասում: ՄԱՐԹԱ.—Լոի, թազագլաղի: Կասես՝ աստված ել չկա:

ԱՆՆԱ.—Վոչ...
ՄԱՐԹԱ.—(Ողօր կծածի պիս բռչում ե Տեղից յեվ զարմանի և արտախտում) Կարգալով ե ընկել մեր աղջիկը (ու լարված նայում ե աղջիկներին):

ՃՈՂԵՐ.—Յես ել հնպես գիտեմ, վոր աստված չպիտի լինի, վոչ...

ՄԱՐԹԱ.—Դու լի՞: Կիսալիենթ:

ՃՈՂԵՐ.—Ասում ես, հա, տատի: Առել, անցել են՝ աստված, հա աստված, բայց վհրտեղ ե նա, եղ աստվածը: Ամեն տեղ չարիք, կեղծիք, վիրավորանք, ալան-թալան... Մի մտիկ՝ ինչպես հարուստներն իրենց ճանկերն են գցել ամեն ինչ: Բա ես խիզա: Եղ աշքը բան ե: Այ, մեր աշքի առաջ Խառապանց Բողոքն ուժուկող արած ինչ ուզում ե, են ել անում ե:

ԱՆՆԱ.—Այ քեզ բան. ինչ, նրան նստեցնել չի կարելի:

ՃՈՂԵՐ.—Դե մի փորձիր:

ԱՆՆԱ.—Այն, կփորձեմ, կվերցնեմ ու մի լավ կներկեմ լրագրում: ՃՈՂԵՐ.—Ապա, քեզ տեսնեմ: Նա կարմիր բանակացինների այրիներին նպաստ ե բաժանում: Յերեկ գնացի ստանալու, նա ինձ ասում ե, մութն ընկնելիս արի: Իմ խսաքին՝ թե եղ ինչու, պատասխանում ե. «արի, նպաստդ տամ» ու ծիծաղում ե, աչքով ե անում եղ շան վորդին: Վոնց ե մեզ տանջում, չարչարում: Գնացողները լալիս են ու լալով գնում: Այ, եղ նկարագրի, մեր պատիվը պաշտպանիր:

ԱՆՆԱ.—Այն, կգրեմ, կգրեմ:

ՄԱՐԹԱ.—Այ աղջի, մի վոազի: Մանգաղդ սուր ե, համա հանգը բաժանովի յե:

I ԱՂՋԻԿ. —Մենք են ել լավ գիտենք, տատի, վոր Բոդուը ձեզ հարեան ե և ձեր Ավոցի մոտիկ ընկերը:

ԱՆՆԱ.—Թեկուզ՝ ընկերը չե, աչքի լուսը լինի: Գրելու բան կա, կգրեմ: (Դուռը բացվում ե, մենում են վրասրդները):

ԱՎՈ. —Ես ի՞նչ աղմուկ ե: Գորտերի ժամտուն եք դարձրել:

ԱՆՆԱ.—Ավիկո, քաջ, վորսորդս: Վերջապես տեսությանդ արժանացա (Փարարվում ե վզով):

ԱՎՈ. —(Համբուրելով): Մի թող հրացանը տեղավորեմ:

ՃՈՂԵՐ.—Ճնորհավորեք, շնորհավորեք, Ավիկին:

ԱՆՆԱ.—Ի՞նչը շնորհավորենք:

ՃՈՂԵՐ.—Ի՞նչը, ի՞նչը: Մպանել եք: Շամա:

ԱՎՈ. —Այն. բախտերս բանեց: Իսկապես վոր...

ԳԱՄՊԱՐ. —Հյուրասիրություն սարքիր: Այս հաջողության համար անշուշտ պիտի կոնծենք:

ԱՎՈ. —Քետք ե կոնծենք, բայց վորտեղից ճարենք:

ԳԱՄՊԱՐ. —Յեկավ քառորդ թունդին: Համաձայն ես:

ԱՎՈ. —Համաձայն եմ:

ԳԱՄՊԱՐ. —(Այժմ տակ առնելով բոլորին) Ըհը: Դու, Սոֆիկ, աւու-

տԵղ ես: Շուտ, կծկի պես գլորվիր մեր տուն, կես թունդի
արալը բեր: Դեհ, շուտ, մի շնչով, մի վոտդայտեղ, մյուսդ
այնտեղ:

ԱՆՆԱ.—Վոտները պետական չեն...

ԳԱՍՊԱՐ.—Վոշինչ: Դեհ, շուտ:

Ի ԱՂՋԻԿ.—Քեռի Սիմոն, իս գնամ:

ԳԱՍՊԱՐ.—Վազիր, Վարդուշ: Սոփիկը գոռոգացել ե: (Այդ ժա-
մանակ յեկողները հանվում են, իրացանեները մի կողմ են
դիում յեվ նսում սեղանի շուրջը):

ԱՆՆԱ.—Ավելի դեհ, պատմիր ձեր հաջողությունից:

ԱՎՈՒ. — Այ թե հաջող գնաց, հա: Զտեսնված, չլսված բան: Կանգ
առանք. հինգ րոպի անց՝ լսում եմ աղմուկ, աղմուկ, ասես
անտառը կործանվում ե, դեպի ինձ և փշում: Կանգնած եմ
բլրակին և ինչ եմ տեսնում. յեղենու վրա ձյունի փոշին հա-
վաքվում ե:

ԲՈԴԻՈԼ.—Ես ել ելի տեսնում:

ԱՎՈՒ.—Պոչերը թեերի պես փոել եր, իսկ ճյուղերը վեր-վեր
ելին թուչում: Թողի, վոր նա ինձ մի յերեսուն քայլի չափ
մտանա և նոր խփեցի, մեկ ել ուզեցի խփել, նա ընկավ
գետին, վառներով թափահարեց, ուզում եր ծառը ջարդել:
Դինջացած պառկել եր գետնին:

ԳԱՍՊԱՐ.—Գնդակն իր բանը տեսել եր:

ԱՎՈՒ.—Հենց սրտին եր առեր:

ՄԱՐԹԱՐ.—Հաջողվել ե, հաջողվել ե:

ԲՈԴԻՈԼ.—Եղ ել ի՞նչ հաջողություն և վոր... Անցանք Ղամըշ-
կուտ գուղի յետեր, նա այնտեղ մի ուրիշին սպանեց:

ԱՆՆԱ.—Այն, Ավիկս ամբողջ Լոռվա շրջանում առաջին վոր-
սորդն ե:

ՇՈՂԵՐ.—Մարդիկ թող բախտավոր լինեն, միայն Գեորգս գնդա-
կահար չլիներ:

ԳԱՍՊԱՐ.—Դեհ, ոռւ քեզ ամեն որ սպանի, հա սպանի:

Ի ԱՂՋԻԿ.—(Գրկած բերում ե Տկով արադը): Հա, հիմա կասեք ու-
շացավ: Առա ու կրնկուի գարձա: Մարո տատը ջգրվեց հա:

ԳԱՍՊԱՐ.—Գրողը տանի նրան: (Ձեռից խլելով արադը՝ ասում
ե): Ե, Ավիկ, հրաման արձակիր:

ԱՎՈՒ.—Կոկ ջան, քեզ տեսնեմ, սրանց պատվիր:

ԱՆՆԱ.—(Լցնում ե բաժակը, տալիս ե Բողովին): Խնդրում եմ, հա-
մեցեք:

ԲՈԴԻՈԼ.—(Խմելով): Շատ շնորհակալ եմ:

ՄԱՐԹԱՐ.—(Բերում ե պնակով հաց յեվ սունկ): Ճաշակեցեք...

ԱՆՆԱ.—(Գասպարին): Խնդրում եմ, կերեք:

ՄԱՐԹԱՐ.—Կերեք, ուրիշ բանի յետեկց միք ընկնի:

ԱՆՆԱ.—(Ամուսնուն): Ավիկ, վորսից խոսիր...

ԱՎՈՒ.—(Վերցնելով բաժակը): Թո կենացը, Անսա ջան, քո կե-
նացը:

ՄԱՐԹԱՐ.—(Գլուխ տալով): Վարդի, միշտ հաջողակ լինես:

ԱՎՈՒ.—Չեր աղոթքներով, մայրիկ, ձեր աղոթքներով...

ԲՈԴԻՈԼ.—Իսկ յուք, աղջկեք, շարժվեցեք: Տանտիկին, սրանց
հլուրասիրիք, պնդություն չանես:

ԱՆՆԱ.—Ի՞նչ պնդություն. թող մեր ուրախությունն ամենի տանը
լինի: (Աղջկեները խմում, ուսում են):

ԳԱՍՊԱՐ.—Հիմա յերկորդ պահիրց բերեք, յերկորսդ: (Խմում են
ու ծիծաղում):

Ի ԱՂՋԻԿ.—Հիմա մենք, քեռի Ավիկ, ձեր ու Անսայի կենացի վրա
կերգենք:

ԲՈԴԻՈԼ.—Յերգեք, յերգեք:

ԱՎՈՒ.—Յերգեք, ձեզ տեսնեմ, Անսա, նստիր ինձ մոտ: (Անսան
նսում ե ամուսնու կողին, աղջկեները յերգում են):

ԲՈԴԻՈԼ.—(Խմելով իր կողինին): Լավ ե, եղանա սրտալի: Ին-
ձանից կես թունդի: Գասպար, ճարվեմ ե:

ԳԱՍՊԱՐ.—Կարպի, գու սաղ լինես. մեր զավոդը մի գլուխ աշ-
խատում ե: Մերժիլ չկա:

ԲՈԴԻՈԼ.—Աղջի, վազի արազի, դուք մնացածներդ, յերգեք:
(Խմում ե, սղալում ե միրուք, աղջկեները յերգում են):

(Աղջկը բերում ե արազը, հետք գալիս ե Թարուլ վեսային):

ԹԱԹԹԻԼ.—Այ, խզառ բան: Իրանք ուտում խմում են, իսկ ինձ
ծերունում՝ թաթուլ վշտալուն մոռացել են: Այս ել խթզ ե:

ԳԱՍՊԱՐ.—Քո բախտն ել եղանա ե: Զուր չեն ասում թաթուլ
վշտալի: Բաժին չունես ես աշխարհում:

ԹԱԹԹԻԼ.—Յես փալ-բաժին չունեմ: Թյու Յերկու պախրա յեն
սպանել, պարձենում են: Տո, լակոտներ, ով ե ձեզ վորսորդ
դարձրել:

ԱՎՈՒ.—Ուզիկ ե, պապի, ուզիկ ե. իմ տանը միշտ առաջին բաժա-
կը քեզ համար ե պահած: Դեռ հլա յերեխա՝ առաջին վորսը
քեզ հետ արինք:

ԹԱԹԹԻԼ.—Լավ ե, չես մոռացել: Կոփիկ, ուտելու բան բեր:

ԱՆՆԱ. — (Փատվելով) Խմիր, պապի, խմիր... (Փարուլը խմում է):

ԱՎՈ. — (Կնոջը) Աննա, դու ինչո՞ւ չես խմում:

ԱՆՆԱ. — Յես հյուրասիրության հետ եմ:

ՄԱՐԹՈՒ. — Աննա, դու յել սեղան նստիր: Յես հյուրասիրում եմ:

ԱՆՆԱ. — Մի անհանգստանա, մայրիկ, չէ՞ վոր լիս վորսորդ չեմ:

ԳԱՍՊԱՐ. — Իսկ գուշ, աղջկերք, ինձ համար պարեցեք, մի լավ պար: Դե, Շողեր, սկսիր:

ՇՈՂԵՐ. — Առաջ դու պարիր:

ԳԱՍՊԱՐ. — Այ դու անպիտան: Յես ծեր տեղովս առաջդ պարեմ:

ՇՈՂԵՐ. — Դեռ կարող ես պարել:

I ԱԴՐԻԿ. — Շողերը զարդում ե, վշտացած ե: Մենք պարենք: (Յերգում յեվ պարում է): Քեռի Դասպար, ինձ հետ պարի:

ԳԱՍՊԱՐ. — Յեթև ձեռք չես առնում, հետդ կպարեմ: Ծեր եմ, բայց շնորքի տեր եմ: (Դուրս ե գալիս յեվ եղ աղջկա հետ պարում, Խումբը յերգում է):

ԹԱԹՈՒԼ. — Ես ել բան ե. Թոռնիկս չի ուզում, բայց լիս կպել եմ նրանից: (Քաշ ե գալիս Դասպարի յետելից): Դասպարը դիմում ե նրան յեվ գլուխ: Բոլորը ծիծաղում են),

ԳԱՍՊԱՐ. — (Բարձրանալով): Ի՞նչ եք Խրխնջում, այ զամբիկներ: Գրողը ձեզ տանի: Իսկ դու, ծեր գալիք ի՞նչ ես վոտի տակընկել:

ԹԱԹՈՒԼ. — Եդ դրուստ ե: Վոտս տրուցեցիր:

ԳԱՍՊԱՐ. — Գլուխով պիտի տրորել:

ՇՈՂԵՐ. — Գնանք, աղջկերք, Մեր քաջերը շատ ճոշմիշ են յեղել Արադի տկնոր են դարձել:

ԲՈՂՈԼ. — Խոսիր, բայց չափն խմացիր, դու յես ճոշմիշ յեղել:

ԳԱՍՊԱՐ. — Նպաստն ստանալիս ել քիթը տնկում ե: Ավելի ուշ

արի, լիս քեզ կրկնակին, յերկու տակը կտամ: Հա, հա, հա:

ՇՈՂԵՐ. — Այս, դու սատկես, ծակաչք շուն: Եդ բաց աչքով չես տեսնի:

ՏՀԱՄՄԱՐԴԻԿ. — Հա, հա, հա (Հոհուում են):

(Աղջիկներն ել հոհուալով զնում են):

ԱՆՆԱ. — Այդ ինչո՞ւ, քեռի Դասպար, վիրավորում եք Շողերին:

ՏՎԻՔ նրան իր հասանելիքը: Ել ի՞նչ եք չարչարում:

ԳԱՍՊԱՐ. — Ի՞նչ վիրավորանք, ի՞նչ չարչարանք: Թեկուզ հենց եկուց գա, ստանա: Վոր ասի իրիկունն արի, եդ նրա համար,

վոր ցերեկն զբաղված եմ... Հա, հա, հա: Ի՞նչ ե, նրանից ի՞նչ կպակսի, Յերկնքից ե իջել, վոտներն ամպհտ են: Ի՞նչ ե, վոր... Յեղած, չեղած մի զինվորի ալրի:

ԲՈՂՈԼ. — Զի պակասի, այլ կավելանա: Հա, հա, հա:

ԱՆՆԱ. — Եդ ինչ վոր դուք եք ասում, ամոթանք ե: Ամոթանք ե մեր բոլոր կանանց համար և Շողերի համար ել մեծ վիրավորանք: Գևորգին կովի դաշտում սպանեցին հեղափոխության համար, յերբ կոփը անգլիացիների զեմ եր: Յես... ԱՎՈ. — Յես հա, յես առելանցել ես: Զուր տեղն ի՞նչ ես ուրիշի գավին ծախու առել: Մենք գործ չունենք, վոր Շողերի գործերի մեջ ես խառնվում: Պետք ե կոռպերատիվի հաշիվները վերջացնենք:

ԲՈՂՈԼ. — Ի՞նչ հաշիվներ. գործը պարզ ե: Կիրակի որը ժողով կանենք: Գասպարին առաջկա պես նախագահ կընտրենք: Հարբուզանց Յենոքին դուրս կշպրտենք: Նոանանց Հակոբին իր տեղը կթողնենք: Նա իմ յեղբայրը և մեր մարդն ե: Յես ել կմնամ վերստուգիչ հանձնաժողովի նախագահ: Ամենինչ կառնենք մեր ձեռքը: Կմացնենք յերկնեկ հաշվապահություն:

ԳԱՍՊԱՐ. — Մանեթ, մտիր գրպան, կոպեկ, յել սեղանին:

ԱՎՈ. — Արգախոսվ կարելի յեւ իսկական իեկամուտ ունենալ: (Տրամելով ձեռները): Ալլենք, ինչպես պետք ե... Միայն, գիտեք, յեղբայրներ, գուրըս չի գալիս մեր քարտուղարը: Թեե նա կովարար չի, բայց վոր կոմսոմուն ե: Յես նրան հավատարմություն չիմ տալիս, բայց նա ամեն բանի մեջ խառնվում ե:

ԲՈՂՈԼ. — Գրագետներ մեր մեջ քիչ ունենք:

ԱՎՈ. — Բա կի՞նս: Նա Բենոլից ել ավելի զրագետ ե, եդ կոմսոմունի ըջիջի քարտուղարից: Մինչեւ անգամ նրա գրածը տպագրել են «Մաճկալում»: (Ուզում ե հիշել գրվածքը):

ԲՈՂՈԼ. — Հա, մենք ել ենք կարգացել:

ԳԱՍՊԱՐ. — Ի՞նչ կա վոր. մենք Աննային քարտուղար կընտրենք Բենոլի տեղը: Առաջիկն ել կավելացնենք, փառք աստծո, մեր մարդիկն են:

ԱՎՈ. — Շատ ճիշտ ե: Ուրեմն գործը կազմակերպված ե: Ե, իմ գրագետ Անոս, ուղարկե բարտուղար դառնար:

ԱՆՆԱ. — Վահ:

ԱՎՈ. — Վահ: Ի՞նչնեւ:

ԱՆՆԱ. — Վորովհետև քեզ խորհուրդ չեմ տալիս: Հեռացիր դու արդ կեղտու գործից:

ԳԱՍՊԱՐ. — Կոռպերատիվը կեղտու գործ ե: Բան ասիր, ելիք վոսկի գործ ե, վոսկի:

ԱՆՆԱ. — Ճիշտ ե, վոր կոռպերատիվը վոսկի գործ ե, բայց ուունքան կեղառուել եք...

ԲՈՒՌՈԼ. — (Ընդհատելով): Շատ բան ես հասկանում, տեսեք, բան ե գործել. . Գլուղթղթակցունի... Լեզուն բացվել ե:

ԱՎՈ. — Անսա, դու առանց մտածելու լեռ խոսում: Վոր եղանակ երա ինչու մեզ եք գործի համար չելին հրավիրում: Տեսնուն ես, վոր նրանք մենակ եցին ուզում եք գործի տերը դառնալ: (Սպանալով): Վաչ, եղանակ բան չի լինի:

ԲՈՒՌՈԼ. — Ե, ուրեմն եստեղ մենք ինչ ենք

ԳԱՍՊԱՐ. — Այո, մենք բոլորս միասին, միասին:

ԱՎՈ. — Անսա, տեսնում ես, բոլորս միասին ենք: Առանց մեզ աստված հեռու տանի: Թուզլ չեմ տա:

ԱՆՆԱ. — Դու յել բան ես ասում, այ մարդ. խելքդ գլուխող ե ի՞նչ գաղար ես ջարդում: Ամաչիք: Միասին, ի՞նչ միասին չարեաներին միասին եք ուզում թալանել:

ԱՎՈ. — Դու արդեն քեզ կորցնում ես, Անսա: Թալանել, թալանել՝ այն ել հարեաներին: Փառք աստծու, մերը մեզ հերիք ե: Կոռպերատիվից յեկամուտ ունենալը՝ առետրական զործ ե: Ասած ե «մատղ մատաղատնից մի հանի: Ով չուստ, նա կուշտ: Ով համարձակ ե, կերածն յերկու տակ ե: Ով գրանից կհրաժարվի: Դու յել թեև շատ գրագետ ես, բայց լսելքդ ելի կնկա յե:

ՄԱՐԹԱ. — Եղանակ խելքն ել հո խելք չի, հիմարությունից ել վատ ե: Աղան-թալան ե: Մըրերը սուտ են, աստված չկա: Հասկացեք: Ուր հասանք...

ԹԱՐԹՈՒԼ. — Մարթա, եղ ասա, եղ ասա:

ԲՈՒՌՈԼ. — Հիմա շատերի բերանի խոսքն ե՝ աստված շկա, աստված շկա: բայց դատարկ խոսք ե: Մեր գիրքին վայել բան չի: Ի՞նչ մի մեծ ծախս ե տերտեր պահելը, չենք աղքատանատ: ԱՆՆԱ. — Բանն այդ չի, հասկացեք դուք: Կոռպերատիվը հասարակական հիմնարկ ե: Նրան անսպաս պիտի վարել վոր բուրն ել ոգտվեն:

ԱՎՈ. — Իսկ մեղ բան պետք չի: Աշխատում եմ, ստանում, եղ տեղ ինչ թալանի բան կա: Զե, կծիկդ թնջկվել ե, Անսա: Հասկացի, թե ինչ յեկամուտ կունենանք: Դու խնդրեցիր, վոր գլխիդ թաշկինակ առնեմ, յես մեծ շալ կառնեմ, քեզ ապրեշում կհագցնեմ:

ԱՆՆԱ. — Յես քո ապրեշումը չեմ ուզում: Դու ըմբանիր, թե ինչ

սարք ու կարգ ունեն ուրիշ կոռպերատիվները: Լսիր, տես ինչ ե ասում Անտոնը:

ԳԱՍՊԱՐ. — Փահելվանանց Անտոնը, մեր հրահանգիչը:

ԱՆՆԱ. — Այսու Նա:

ԳԱՍՊԱՐ. — Այ, տղա: Շատ գեղեցիկն ե: (Ավոյին) Դու նրա մոտ, քո ծուռ դնչովը, հայր Աբրահամի միրուքովը ինչ ես, ի՞նչ: Նա ածիկած, բեխերը նոր ծլած, ժամացուցը վոսկե շղթայով, ձին տակը՝ մի պատկեր ե, պատկեր: Իհարկե, կսիրահարվեն վրան:

ԱՆՆԱ. — Դուք ձեր արշինով մի չափեք:

ԳԱՍՊԱՐ. — Այս, վախ: Յեթե իմ արշինը ձեր մեջքին դար, դուք կիւելացվորեցիք: Գնանք, Բողոք: Եստեղ բան զլուխ չի դա: ԲՈՒՌՈԼ. — Գնանք, մենք սրանց հարմար չենք

(Հագնիում են):

ՅԵՐԿՈՒԽՍՈՎ. — Մեր շնորհակալությունը. բարի գիշեր:

ԳԱՍՊԱՐ. — (Ենմիից): Պախրաներին վաղը կը բթենք:

ԱՎՈ. — (Տխուր): Այս, վաղը (Դուռը դրվում ե, նա ցատկում է դեպի Աննան յել բդավում): Հրահանգիչ, եղ ի՞նչ հրահանգիչ ե: ԱՆՆԱ. — Ամենահասարակ, սովորական: Անցած ամսին յեկավ... Պատմեց:

ԱՎՈ. — Յեկավ, եղ ինչպես ե, վոր յես նրան չտեսա:

ԱՆՆԱ. — Դու այստեղ չելիր: Հենց այդ ժամանակ սագավորս ելիք գնացել:

ԱՎՈ. — Բնշը, իմ բացակայությանը սիրաբանություն ես աշնում: Լավ բան ե:

ԱՆՆԱ. — Ամիկ, բան ասա, վոր բան լինի: Հանգստացիր: (Դրվել կում ե նրան): Ինչ ասացիր: Յես քեզ սիրում եմ, սիրում եմ ամուր, պիհոդ: (Հանբուրում ե նրան):

ԱՎՈ. — (Ցրված) Ինո, սուտ չես ասում:

ԱՆՆԱ. — Ինչ սուտ, ինչ բան: Սիրում եմ քեզ, մենակ քեզ եմ սիրում և դրա համար ել խորհուրդ եմ տալիս: Վոր վատ գործերից հեռանաս:

ԱՎՈ. — (Ցես բավելով) Վատ գործ չի, ոգտավետ ե:

ԱՆՆԱ. Բան մի բոնի եղ անիծված Գասպարի հետ:

ԱՎՈ. — Չեսք քաշի, նա իմ ընկերն ե և հայտնի վորոսրդ:

ԹԱՐԹՈՒԼ. — Գասպարն ե հայտնի վորոսրդ: Կորցրու: Վալրահանջի մեկն ե:

ԱՆՆԱ. — (Վեր բաղելով սեղանի) Յես չեմ ուզում քո վորոը: Զո-

լերում թափառում ես, և թափառում: Բերածդ ի՞նչ ե: Այսկենան.—Վհչ, դեմ չեմ զցի:

Ավ.՝ Ել գործ կճարվի:

Ավ.՝ Զե, վորսորդությունը թողնիլը չեմ թողնի, եղ մտքից հանի: Տես մի եսորվա բերածս, յերկու պախրա, եղ բան չեն Աննան.—Կպրեմ, ամեն ինչ կպրեմ: Մեկ ել վոր սիրում եմ ման գալ անտառներում: Ավ.՝ Յերգ մեջք կպաղեմ Գիտես ինչ բան ե վորսի գնալը: Վոչ մի բանի հետ չեմ փոխի:

ԹԱԹՈՒԼ.՝ Յերկու պախրա. մեծ բան ե յեղել: Զորսն ել ենք տեսել: Այ, հիմա պատմեմ, թե ինչպես արջին ու պախրին միասին սպանեցինք: (Նա պատմում ե, բայց լսող չկա): Գնում եմ անտառով. աշուն եմ ասում, հա, ինչպիսի լավ աշուն եր... տաք... իրիկնապահ ե... և լսում եմ... ձայն ե գալիս... գոռում ե, ասես ամպ լինի. վազում ե մացառների միջով... մեծ, մեծ... վիթխարի... (Ննջում ե, գլուխը ցած ե ընկնում): Արջը... են ե բոնում ե պախրին: (Թաքուն արդեն բնած ե):

ԱՆԱ.՝ (Այդ ժամանակ սեղանին ե դնում քանաքամանը յել րուղը, նսում ե գրելու յեկ խոսում ե) Ե, վորսի գնալը քո բանն ե, բայց Գասպարից հեռացիր: Կեղասոս մարդ ե և ողավաճառ:

ՄԱՐԹԱ.՝ Ողավաճառ: Ի՞նչ ե, խմելը պիտի վերջացնես: Մարդ չպիտի ուրախանա: Ուրիշի գործերի յետեից ես ընկել, քոները մռացել ես: Մաղերը տես ինչպես են խճճել, իսկ ինքը նստել թուղթ և խծրծում:

Ավ.՝ Ի՞նչ ես գրում:

ԱՆԱ.՝ Գրում եմ... Գասպարի արարքների մասին եմ գրում, թե ինչպես նա նպաստ ե բաժանում, ինչպես արագ ե քաշում, ինչպես ոի զավոդ ե բացել: Թող միանգամից հրան գլուղից քշեն:

Ավ.՝ Թող:

ԱՆԱ.՝ Վհչ: Ի՞նչ թողնել: Թողնելն ի՞նչ ե:

Ավ.՝ (Մոտենալով սեղանին): Դու եղան կոռպերատիվի և իմ մասին ել կպրես:

ԱՆԱ.՝ Կպրեմ, այն, կպրեմ: Հավը կանես, լավդ կպրեմ, վատը կանես, վատդ կպրեմ:

ՄԱՐԹԱ.՝ Այս դու ջանի չիսկան: Դու նրա կնիկն ես, թե ջանին կրակ:

ԱՆԱ.՝ Յես:

Ավ.՝ Լոիր: Դեմ զցիր թուղթը:

Ավ.՝ (Խորում ե րուղը, տրում ե ու սպրում անկյունը) Ե

հանի: Տես մի եսորվա բերածս, յերկու պախրա, եղ բան չեն Աննան.—Կպրեմ, ամեն ինչ կպրեմ:

Հաշվում: Մեկ ել վոր սիրում եմ ման գալ անտառներում: Ավ.՝ Յերգ մեջք կպաղեմ մտրակով, են ժամանակ կպաղես

Գիտես ինչ բան ե վորսի գնալը: Վոչ մի բանի հանաքաման (Նպրում ե): գրելուց: Այ քեզ թանաքաման (Զարբնելով)

ԹԱԹՈՒԼ.՝ (Կիսակուն) են ե բոնում ե պախրին: (Զարբնելով)

Վահ, ես ի՞նչ ե: (Տեղից ցատկում ե) Ես ի՞նչ խալտառակու-

թյուն ե (Զարմացած մնում ե):

ՎԱՐԱԴՈՒՅԹ

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Նույն սարքը, ինչպես յեվ առաջին գործողության մեջ:
Նատած են մի քանի աղջիկ յեվատղա:

ԱՆՆԱ.—Կարգի պիտի բերենք մեր կոմսոմոլը: Կոմսոմոլը կա
գործը չկա:

ԲԵՆՈ.—Ի՞նչ գործ ես ուզում:

ԱՆՆԱ.—Հենց թեկուզ խրճիթ-ընթերցարան հիմնելը: Զե՞ վո՞
հավաքվելու տեղ չունենք: Դիրք ու լսադիր ցաք ու ցրիկ
մնացել են:

ԲԵՆՈ.—Լրագրություն (Հանելով գրանից թերքը) կարող ենք
և կարդալ: (Բանում ու կարդում ե) «Զե-Զե-Զեմ-Յեր
լինը խոսեց Բի-Բիրմինգամում կայացած միտինգին»: Ու
րիմն լավ ճանաչիր մերոնց: Հիմա նրանք Անգլիայումն ել
միտինգներ են սարքում:

I ԱՂՋԻԿ.—Մարդու լեզուն չի դառնում... Զիմբելն ի՞նչ առ
նուն ե:

ԱՆՆԱ.—Զիմբելինը անգլիացի իե, նրանց մինիստրը. նա բան
վորների և գուղացիների թշնամին ե:

ԲԵՆՈ.—Ո՞վ գիտե, բան չի հասկացվում: Այ Լենինը՝ մերն եւ
կալինինն ել մեր մարդն եւ: (Դուռը բացվում ե, ներս եւ
մտնում երահանգիլը):

ՀՐԱՀԱՆԳԻՉ.—Բարե ձեզ.

ԱՆՆԱ.—Բարե, բարե, Անտոն, Ես ի՞նչ ե, չես յերեսում:

ՀՐԱՀԱՆԳԻՉ.—Այո, վաղուց ե, վոր չեմ յեկել Այս, այն, շատ եմ
ցավում: (Չորս կողմը դիմելով). Մի կարևոր գործ ունեմ
ձեզ մոտ, ընկեր Աննա: Կարելի յե ասել մի հատուկ, առ
ունձին գործ:

I ԱՂՋԻԿ.—Յեթէ խանդարում ենք, կարող ենք գնալ:

ՀՐԱՀԱՆԳԻՉ.—Ալո, այնպիսի բան ե, վոր կողմանկի մարդիկ
չլինեն:

II ԱՂՋԻԿ.—Գնանք, գնանք: Տեսնում եք, խանդարեցինք: Գը-
նանք աղջկերք:

ԲԵՆՈ.—Գնանք, գնանք: Հլա մի թղթակից առա, կարելի յե
գաղտնի հրահանգ կա: (Բոլոր գնում են անբախտան ծիծա-
ղելով):

ԱՆՆԱ.—Ի՞նչ բան ե: Խնդրեմ, հստեք սեղանի մոտ:

ՀՐԱՀԱՆԳԻՉ.—(Նստում ե, հանում է լրագիրը): Ալ, Մամկայի
համարը. կարգացեք ձեր հոգվածը:

ԱՆՆԱ.—(Բորբոված) Տպել են: Ինչպես ուրախ եմ. շատ շնոր-
հակալ եմ, վոր բերել եք:

ՀՐԱՀԱՆԳԻՉ.—Ե, իս վոր բոլորովին ուրախ չեմ, առանց այն
ել ուրախ չեմ: Զելի սպասում, վոր դուք ի՞նձ ալգան կպատ-
վելիք:

ԱՆՆԱ.—Ի՞նչ ալգան, ընկ. Անտոն: Այստեղ ի՞նչ վոր գրած ե,
ճիշտն ե գրած: Ապրանքը թացնում են, հաշվեմատանները
վերանորոգում են, հները վառել են, նորերը գրել Զե՞ վոր
ձեռքից ել կարելի յե իմանալ, վոր մատյաններն ուրիշ ձեռ-
քով են գրված:

ՀՐԱՀԱՆԳԻՉ.—Հենց եղ ե, վոր պախարակելի յե:

ԱՆՆԱ.—Ի՞նչ, գուք կարծում եք եղ իմ սրտովն ե: Այդպիսի կեղ-
տոտ գործ... Դեռ ամուսնում ել մեջ են գցել: Բայց հիմա
յես նոր փաստեր ունեմ, միենուդն ե, իս կրանամ...

ՀՐԱՀԱՆԳԻՉ.—Այս: (Յանկում ե տեղից յեվ հուսահատ) Սատանան
տանի ձեզ ձեր մերկացումներով և գրությունով:

ԱՆՆԱ.—Ի՞նձ, ի՞նձ: Յես վոչինչ չեմ հսկանում:

ՀՐԱՀԱՆԳԻՉ.—(Զայանցած յեվ ավելի վրդովիլով): Նա բան չի
հասկանում: Դուք բոլորին մատնել եք: Վոչ թե միայն ձե-
րոնց ե հասնում: Դատախազը մեղ ել հարց ու վորձ արավ,
թե ի՞նչ եք տեսել, վորտեղ եք յեղել:

ԱՆՆԱ.—Ընկ. Անտոն, չե՞ վոր իս ձեր խորհրդով, դուք չելիք
ասողը՝ նկարագրեցեք, մերկացրեք: Դուք չելիք կոռպերա-
տիվից բացերից խոսողը:

ՀՐԱՀԱՆԳԻՉ.—Եղ արդեն ի՞նձ ներեք. ճիշտն եմ ասում. հիմա-
րին ասին աղոթք արա, նա ճակատը քարերին տալով ջար-
գեց: Եեթե գրելիք արադ քաշողների, տերտերների մասին,
եղ ուրիշ: Ի՞նչ կարիք կար կոռպերատիվի մեջ խցկել: Եղ
լուրջ գործ ե, վոր իսկական գիտակցություն և պահանջում:



ԱՆՆԱ. — Իսկ յեթի աշնուեղ չարաշահություն կա...

ՀՐԱՀԱՆԳԻՉԻՉ. — Կգրեցիք... Իսկ ամենից լավը կլիներ ինձ, մասնավորապես, զործը մի կերպ կարգի կընկներ: Հիմա աշխարհը ձայն տվեց: Ինձ լսեցեք, ընկ. Աննա, զուք ինձ լավ գիտեք, թե ինչպես լավ եմ վերաբերվում գեղի ձեզ, չեղ կարելի արդյոք այդ մի կերպ ծածկել: Հենց ասել՝ սխալվել եմ, թյուրիմացություն եւ:

ԱՆՆԱ. — Եղ ինչպես: Յես ուզգակի չեմ հասկանում: Այնուղ մերկացնելու գեռ շատ բան կա:

ՀՐԱՀԱՆԳԻՉԻՉ. — Զեր զիտակցությունը տեղն եւ: Զեզ ասում են մարդավարի, զոր ամեն բան լավ կարգի բերել, իսկ զուք ելի ձերն եք պնդում, «Նոր մերկացումներ եք անում»: Դըրանից մեզ ազատեք: Թողեք կոռոպերատիվը, գրեցեք ուրիշ վորեն բանի մասին, իսկ յես կամացուկ քննություն կկատարեմ, ամեն ինչ կարգի կրերենք, ավազակներին կվորնդենք, ձեր եւ ամուսնուն վարչության նախագահ կանենք:

ԱՆՆԱ. — (Նարձելով զլուխը) Եղ են չի...

ՀՐԱՀԱՆԳԻՉԻՉ. — Ամուսնուկ չեք ուզում, ցուց ավեք մի ուրիշին չենց զուք: Այս, այդ ամենալավը կլինի: Հիմա կանաց են առաջ քաշում... Դուք նախագահ... վորոշված եւ: Ուրիշ եւ ինչ մերկացումներ: Հերիք եւ վերջ ավեք: Զեռք ավեք: (Մեկում ե ձեռքք):

ԱՆՆԱ. — Վաչ, ինձ համար ամոթ եւ:

ՀՐԱՀԱՆԳԻՉԻՉ. — (Բնդիմանելով) Ի՞նչ կա ձեզ ամաչելու: Ոզուն բերող տեղ եւ:

ԱՆՆԱ. — (Նարձելով տեղից) Դուք ինձ այնպես չհասկացաք: (Դժվարությամբ) Յես ձեր տեղն ամաչում եմ:

ՀՐԱՀԱՆԳԻՉԻՉ. — Այ, այ, այ: Այ թե ինչ: Ե՛, են ժամանակ զուք ձեզ մեղադրեք: Կոտ քննիչը և դուք պատասխանատու կլինեք:

ԱՆՆԱ. — Դուք ինձ միք վախեցնի: Յես վախենալու բան չունեմ: Կպատճեմ քննիչին են բոլորը, ինչ զոր զիտեմ և մինչեւ անգամ ձեզ հետ ունեցած խոսակցություններս եւ կավելացնեմ:

ՀՐԱՀԱՆԳԻՉԻՉ. — (Վեր-վեր բոշելով) Դուք եղ ինչ եք անում: Եղ ինչու համարս: Ե, եղ ուզգակի անմտություն եւ: Դուք զիտեք, յես ինչպես եմ վերաբերվում գեղի ձեզ: Իսկ յեթե յես խոսում եմի, խոսում եմի ընդհանուրի ոգտի համար:

(Դուռը բացվում ե, մենում ե Ավան յել գեռ շեմից):

Ա.Վ.Ռ. — Ընդհանուրի ոգտին: Ուրիշների բախտն են վարոշում, բացց ինձ մոռացել են:

ՀՐԱՀԱՆԳԻՉԻՉ. — Մոռաց, մոռացել են: Թյու: Բա... բարե ձեզ, ընկեր:

Ա.Վ.Ռ. — Սագը խոզի ընկերը չի: Դու ի՞նչ ես քաշ գալիս ալսուեց: Ի՞նչ բան ունես: (Մոռենում ե):

ՀՐԱՀԱՆԳԻՉԻՉ. — (Բարձրանալով տեղից) Յես... յես հրահանգիչն եմ... կոռպերատիվի ստուգում ե:

Ա.Վ.Ռ. — Կոռպերատիվի ստուգում ե: Ինչու յես այստեղ յերկացել: Ամերող փողոցը ինձ վրա ծիծաղեց: Յերկուսով լավ եք փակվել:

ԱՆՆԱ. — Թող, Ավիկ, փակվելու ինչ կա:

Ա.Վ.Ռ. — Լոյր: Խայտառակեցիր զու ինձ: Խայտառակեցիր ամբողջ գյուղում: Աղջիկները ծաղրում են:

ՀՐԱՀԱՆԳԻՉԻՉ. — Նրանց միք լսի, միք: Յես եսուղ գործի, մի վատ գործի համար...

Ա.Վ.Ռ. — Տեսնում եմ գործը:

ՀՐԱՀԱՆԳԻՉԻՉ. — Մի խայտառակ գործ: Այ (Թափանարելով բերքը) բոլորը ձեր կոռպերատիվի, ձեր չարաշահությունների մասին ե

Ա.Վ.Ռ. — Այ զու շան տղա, յես քեզ կսպանեմ... (Վեցնում ե հրացանը) շան պես կսպանեմ: (Հրահանգիչը պորտֆելը վերցած, հչոցով դիմում ե լինդի դուռը: Ավան բարձրացնում ե հրացանը):

ԱՆՆԱ. — (Բոնելով Ավոյին) Ավիկ, Ավիկ, ի՞նչ ես անում:

Ա.Վ.Ռ. — Կսպանեմ: Ցավիւմ ես սիրեկանիդ վրա:

ԱՆՆԱ. — (Հանկարծ դիմ ե հրաց Ավոյին, նաև նույն ե տախտին, ասելով): Գնա, խփիր: Դուք բոլորդ ինձ ձանձրացրեք, այն աստիճան ձանձրացրեք, զոր գնամ կախվեմ...

Ա.Վ.Ռ. — Կսպանեմ, միենույն ե կսպանեմ:

ԱՆՆԱ. — Ել ինչու յես կանգնել: Նայիր, նապաստակի պես վորոցով փախչում ե, վայ թե յետից չհամես:

Ա.Վ.Ռ. — Դու զեռ ինձ վրա ծիծաղում ես... Այս, զու նրա վրա լաց կլինես:

ԱՆՆԱ. — Լաց կլինեմ: Նա ինձ բոլորից ատելին ե և ինչ ասավ նա... Ուզք...

Ա.Վ.Ռ. — Ապա ի՞նչ ասավ, ի՞նչ: Նրա վրուխը կոռկեմ, վրուխը:

ԱՆՆԱ. — Ի՞նչ ասավ: Նա յել են ասավ, ինչ վոր դու:
Ա.Վ.Ո. — Յես ի՞նչ ասի՞ ե, նա քո մարդո՞ն ե, մարդո՞ւ:
ԱՆՆԱ. — Հիմար ես դու, Ավո. (Նայում ե վրան, գլուխը շարժելով) Փոքրիկ մանուկ ե կարծես: Ախր յեղ ինչ բանի համար եմ սիրում:
Ա.Վ.Ո. — Ե, սիրում ես վոր:
ԱՆՆԱ. — Սիրում եմ: Կարելի յե ըստ սովորության: Զե՞ վոր սիրություն բան չունես:
Ա.Վ.Ո. — Իհարկե, քեզ լուսավորված մարդ ե հարկավոր: Լրագրերում լան ե տպում: Իհարկե գեղջուկը, քո թայը չի:
ԱՆՆԱ. — Վոչ, Ավո, դու չես վատացել, այլ յես հասկացել եմ, տեսնում եմ ինչ ե կատարվում շուրջս: Զե՞ վոր առաջ կուցր մկան նման ելին ապրում:
ՄԱՐԹՈ. — (Քնից զարթում ե) Մի սրան մտիկ: Աչքը բացվել եր չասկացող ե գարձել իր հավատով: Են ինչ հրահանգիչն ել սրան նախատում եր, ասելով, թե յես գեպի ձեզ սիրով եմ վերաբերվում, իսկ դժուք... լրագրում: Զե, խելոք հարս, քո գրությունը բոլորին պատվից կզրիկ: Այ թե ուր հասավ մեր հարսը: Յեկ նրան, և մարդուն, և բոլորին թերթում խայտառակեց, քեզ ամոթ չի մնացել:
Ա.Վ.Ո. — Դու եղ ի՞նչ ես գրել լրագրում:
ԱՆՆԱ. — Ճշմարտությունը:
(Դուքը բացվում ե, մենում են Բողոքը յեկ Գասպարը):
ԲՈՂՈԼ. — Այ դու սատկես քո ճշմարտությունովը:
ԳԱՍՊԱՐ. — Մի խանգակ ել չկա ես կնկա համար:
Ա.Վ.Ո. — Ի՞նչ բան ե: Ինչո՞ւ յեք հայնուում:
ԲՈՂՈԼ. — Ախարեր, ինչպիս չհայնուիս: Գիտեմ, վորաեղից ե բըռնեցրել, անիծվածը:
Ա.Վ.Ո. — Լեզուգ քեզ քաշիր: Յես եմ նրա մարդը. բան ունես, ինձ ասա, իսկ հայնուիլ համարձակվեա: Յես ինքս կդատեմ:
ԳԱՍՊԱՐ. — Հիմար ես դու, Ավիկ, հիմար: Ել ի՞նչ կարող ես անել, յերբ կնկադ եղ խայտառակությանն ես հասցըել: Դեռ նրա սիրելին ել նրանից ել լալիս ե—ինչ անեմ, ինձ խայտառակեց բոլորովին: Յես ել կնկա, յերեխաների տէր եմ, եղ Աննայի պատճառով տէղից պիտի զրկվեմ: Այ քեզ բան, ցավ ստեղծեցինք գլխներիս:
ԱՆՆԱ. — Այ դուք հաստագլուխներ:
ԳԱՍՊԱՐ. — Ի՞նչ: Կերպու: Միրտ դաղվեց: Քարը տեղը հասավ:

Քո սիրելին գլխի մազերն ե պոկում, գործը ծածկել ե ուղում:
ԱՆՆԱ. — Յեզ դուք բոլորդ ավաղակներ եք:
Ա.Վ.Ո. — Անսա, հերիք ե հականառես: Քեզ յերես եմ տվել, աստան ել ես ուղում: Ե, ասում եմ հերիք ե, հերիք:
ԱՆՆԱ. — Հերիք ե ե ինձ ատանջեք: Յես առաջ ասում ելի, զգուշացնում ելի, բայց հիմա պիտի անեմ:
ՄԱՐԹՈ. — Դու կնկան հասանելիք բանն արա: Յես ծերացել եմ, յես ամեն բանի հասնեմ, իսկ սա գիրք կարդա:
ԲՈՂՈԼ. — Բավական ե ջուր պնդացնեք: Մենք յեկել ենք մի լուրջ գործի համար: Ե, դու, Գասպար, ինձնից ավելի լավ կպատմես:
ԳԱՍՊԱՐ. — Ի՞նչ կա վոր, կարող եմ: Գործը շատ պարզ ե: Հրահանգիչ Անտոնն ես ապուրը յեփեց քո եղ գրագետ Աննայի հետ, իսկ հիմա ինքն ել ուրախ չի, յետ ե մանում: Մեզ մոտ ամեն ինչ կարգին, սարգին ե: Հիմա այ, Ավիկ, բանը քեզնից կանցնի, ասա, ի՞նչ անենք:
Ա.Վ.Ո. — Ի՞նչպես թե ինձնից կանցնի: Յես չեմ հասկանում ինչն ինչոց ե:
ԳԱՍՊԱՐ. — Զհասկանալու ի՞նչ կա: Եղ գործը ծածկենք, ծածկագրոց անենք մի կիրափ: Դու ի՞նչ ես քեզ կոտրատում: Քո պոչից ել կրոնեն... Զես պրծնի: Դու ի՞նչ ես մտածում: Ուզում ե մեզ խեղճել տա, վոր ամեն ինչ իր ձեռքն առնի: Դատարկ բան ե, եղ չի անցնի, չե՞ վոր ապրանքը միասին ենք տեղուց արել և մատյաններն ել քո գիտությամբ արտադրվեցին: Զե, պոչ չես կարող փախցնել:
Ա.Վ.Ո. — Դու յել վոր, քեռի Գասպար, ում տունն ես հարցնում: Յես եղ չեմ հասկանում... Յես չեմ հրաժարվում, այս, միաշահն ենք արել: Միան թե ինչո՞ւ հին դարձանը քամուն տալ Կար, հիմա յել չկա:
ԲՈՂՈԼ. — Ինչպիս թե կար: Ախ, կապանելիք, ելի:
ԳԱՍՊԱՐ. — Յեզ յես չեմ հասկանում քեզ, Ավիկ: Գիտես կամ չգիտես, թե ինչ ե կատարվում քո տանը: Փակտ ես կարել, ի՞նչ ե: Հրացանի վոտն ել քաշել ելիք:
Ա.Վ.Ո. — (Զարմացած նայում ե հրացանին): Տեսնեմ ես, վերցրել ելի, ափսոս վոր չարձակեցի: (Հրացանը դնում ե անկյունը):
ԳԱՍՊԱՐ. — Ախ, Ավիկ, քո գրագետը այդ բոլորը նկարագրել ե լրագում: Հրահանգինը յեկավ վերստուգելու, բայց համա-

Ճայն ե դործը ծածկագմբոց անելու. միայն քեզնից ու Ահնաւից յերկուող ե կրում. Ահա, թե վոր դուք ցուց կտաք, վոր եղ ամենը թլուրիմացութլուն ե... կաելով գրած բան է, սխալված են... եղ բոլորին վերջ կլինի:

Ա.Վ.Ռ.—Ա. թե հնարք գտար, ել ասել չել լինի: Քո խելքով գործին վերջ կլինի:

ԳԱՍՊԱՐ.—Ռւրիշ ել ի՞նչ կարող ենք ցուց տալ:

Ա.Վ.Ռ.—Հասկանում եք, թե ի՞նչ եք, խոսում: Ի՞նչ ես կարծում, իս ի՞նձ պիտի գտառապարտո՞ւմ:

ԲՈԴՈԼ.—Լավ, քո վատը դու չես ասի, բայց նա, քո կի՞նը:

Ա.Վ.Ռ.—Ե, նա ի՞նչ: Եղ հո հանաք, մասիսարություն չի, շատ լուրջ գործ ե, ինչ վոր հրամայեմ, են ել կասի:

ԳԱՍՊԱՐ.—Կասկածելի յե... Քավոր կին Անո...

Ա.Ն.Ա.—Ի՞նչ:

ԳԱՍՊԱՐ.—Ի՞նչ ես ասում... Թեղ կկանչեն քննիչի մոտ:

Ա.Ն.Ա.—Ի՞նչ վոր պետքն ե, են ել կասեմ:

ԳԱՍՊԱՐ.—Ե, մի կողմ դիր հանաքը: Քավոր կին, առաջ ի՞նչ պես լավ ելինք ապրում, հաշտ, ապնիկ, իրար հարգելով... ե, դու ասա: Ինձանից մի վիրավորանք տեսած կան եսքան ժամանակ:

Ա.Ն.Ա.—Վոչ, իս տեսած չկամ, բայց ուրիշները տեսել են:

ԳԱՍՊԱՐ.—Ռւրիշները... Դու ուրիշների համար ի՞նչու իս ալիս-րում: Եղ բոլորը Շողերը, են քածն ե տարածել:

Ա.Ն.Ա.—Շողերն այստեղ բոլորովին մեղք չունի, և ամբողջ խոսակցությունն ել վոչինչ բան չարժի:

ԳԱՍՊԱՐ.—Ի՞նչպես թե այդպիս: Հիմա դու ե՞ն ասա, ի՞նչ ցուց մունք պիտի տաս կոոպերատիվի առթիվ:

Ա.Ն.Ա.—Քո ի՞նչ գործն ե: Դու իշխանություն ես:

ԲՈԴՈԼ.—Ինձ Ի՞լ այդպիս ես պատասխանում: Յես Ի՞լ իշխանություն չեմ: Ինձ Ի՞լ չես ճանաչում: Իսկ դու գիտես եղ ի՞նչ ե անվանվում: Հականեղափոխություն:

Ա.Ն.Ա.—Քննիչը կգտնի, թե վորտեղ ե հականեղափոխությունը:

ԳԱՍՊԱՐ.—(Բուռնեցք խփելով սեղանին): Ալի, դու անիծված կինարմատ, նա մեղ կիսեղի ջրում, կա, չկա կիսեղի: Հասկացիր դու, Անո, մենք բոլորս բանուում կլինենք:

Ա.Վ.Ռ.—Հասկացա... Ա. թե ի՞նչ, Անո, հիմարություն ես արել և հերիք ե: Յես բանա նստելու հավաս չունիմ:

Ա.Ն.Ա.—Յես ել հենց ալդ ասում, վաղուց եմ ասում: Յել

լիթե դու ի՞նձ չլսես, բանտում կլինես անպատճառ: Հիմա գնա, խոստովանիր ամեն բան, ամեն ի՞նչ պատմիր այնպես, ի՞նչպես յեղածն ե: Քեզ վոչինչ ել չի լինի, ժողովատարանը քեզ կների...

ԳԱՍՊԱՐ.—Բա մենք...

ԲՈԴՈԼ.—Ա. թե ի՞նչ ե ասում:

Ա.Վ.Ռ.—Դատարկ բան ե: Յես չեմ ծախսի ընկերներիս և դու չհամարձակվես այդպես ասելու: (Ցատկելով դեպի Աննան) Դու կանոնավոր ցուցմունք կտաս:

Ա.Ն.Ա.—Հիմարացրել են քեզ, հիմարացրել բոլորովին, Ավելի...

Ա.Վ.Ռ.—Լոիր: (Բարձրացնում է բռունցքը): Յես քեզ գարձի կրերեմ:

Ա.Ն.Ա.—Ե, կովելով յեկել ե, Ամաչիր: Զե վոր լոթ տարի առանց դրան ենք ապրել:

Ա.Վ.Ռ.—(Խրեն կորցրած) Լոիր դու: Հեռացիր եղ մեղքից:

Ա.Ն.Ա.—(Գնալով դեպի գուռը): Ալո, լավս ե գնամ, թե չե ես ի՞նչ խալտառակ բան, ծեծկվել... Յեվ ի՞նչու համար: Դու վոչինչ չես հասկանում... (Կանգ առնելով Ժեմիքին): Իսկ նրանք հո ընկերներ չեն, այլ դող ավագակներ: Յես նրանց մերկ Ջրի յերեսը հանեմ: (Գուռը վրա յե խփում):

ՄԱՐԹԱ.—(Մոտենալով): Ե, վորդիս, ել դու նրա ամուսինը չես, այլ նրա վոսքի տրեխը: Եղ վարտեղ ե տեսնված, վոր կի՞նը մարդուն եղաքս հակառակի: Են ել հսպիսի բարի մարդկանց մոտ. վախենում ե, վոր մի լավ խրատ տա իր կինան: Մենակ արջավորս ե գնում, իսկ կինարձատից վախենում ե...

ԲՈԴՈԼ.—Կին կա, վոր արջից ել վատ ե:

ՄԱՐԹԱ.—Ա. հենց դրա համար ել պետք ե նրան մի լավ խրատել... Ծեծել ջարգել լավ կնիկը խնդրում ե, վոր մարդն իրեն խրատի և հետո ինքը նրա վոտն ե համբուրում, շնորհ հակալ լինում: Անհան լավ կնիկ ե, բայց ճղից յեկել ե, այլ թե ի՞նչու պետք ե նրան մի լավ խրատել:

ԳԱՍՊԱՐ.—Սպանել նրան, եղ քածին...

(Գուռը բացվում է, Աերս ե վազում ընչափառ միլիցիները):

ՄԻԼԻՑԻՑԻՑ.—Բողովին, քեով Բողովին...

ԲՈԴՈԼ.—Ի՞նչ կա...

ՄԻԼԻՑԻՑ.—Ավագ քնիչը յեկել ե, քեզ հարց ու փորձի յե կանչում: (Բոլորը մնում են առած):

ԳԱՐԱԳՈՒՅՅՐ

ՅԵՐԻՌԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Առաջին գործողության նույն տարբեն ու կարգը, միայն
անկյունում սեղան՝ զրբերով; Ավոն տխուր նստած և սեղանի մոտ:
Մտնում են Բողոլը յեվ Գասպարը:

ԲՈՂՈԼ.—Բարեւ:

ԱՎՈ.—Բարեւ:

ԳԱՍՊԱՐ.—Ի՞նչ լավ բան կա:

ԱՎՈ.—Վոչինչ: Ծանուցագիր ստացաբ:

ՅԵՐԿՈՒՄՈՎ.—Ստացանք, ինչպես չեւ Ալն, եղ պատվին արժա-
նացանք:

ԱՎՈ.—Յեւ յերկուսն հմ ստացել:

ԲՈՂՈԼ.—Յերկմաւը... Եղ ինչո՞ւ համար:

ԱՎՈ.—Յերկուսը... Նստում հմ ու մտածում, մխածում: Ուզզակի
տակն ու վրա յեմ լինում: Մեկը հլա ինձ, իբրև մեղադըր-
յալի, իսկ մյուսն ել, հլա աշխարհի բանը տես, կնոջս, իբրև
վկայի: Բա ես լոված բան ե, կնիկը մաքդու դեմ վկայու-
թյուն պիտի աս: Վորտեղ կա եղպես որենք:

ԲՈՂՈԼ.—Վոր կա եղպիսի որենք, ի՞նչ կարող ես անել: Սահմա-
նել են:

ԳԱՍՊԱՐ.—Են և վոր սահմանել են և ով... Քեզպես հիմարները՝
Քանի անզամ եմ յես ձեզ տոել, վոր կոմունից բան գուրս
չի գա, իսկ զուք խորհուրդներ, հա խորհուրդներ... Խորհըր-
դախացաք:

ԲՈՂՈԼ.—Խորհուրդների դեմ բան չասեք: Մեր իշխանությունն ե-
և շաս ել լավ ե, յեթե չլիներ լիլքը տակ անկծված կին-
արձատը: Որինակի համար մեր կոմունիունները: Ինո հլա
առաջ Ամերիկակից ելին խոսում: Կամ տերտերնեք ի վրա ելին
հաջում, իսկ հիմա գաղար չեն տալիք, առեն բառ ի մեջ քիթ
են խցիւմ և քո Անոն ել միշտ նրանց լուսում եւ:

ԳԱՍՊԱՐ.—Եղ ասենք վոր ճիշտ ե: Տղերքը ոաստիկ յերես են ա-
ռել շատ ջրվկել են: Անցյալ շաբաթ յես մի նոր ապարատ
սարքեցի, քոնը նրա դեմ խաղալիք ե .. Շան լակոտները
հոտն առել ելին, յեկան խուզարկեցին, տարան, դեռ վրաս
ել ծիծաղում են: Դնենք, ասում են, ակումբի մեջ և թեզ
յիփենք... Ե, զրանց, եղ պոչատ ալապտրակների ի՞նչ
բանն ե զավոդ բանեցնելը: Մերը, են ել վոնց ե աշխա-
տում: (Հանում ե յետիու օհւ յեվ դնում սեղանին:): Յերկու
անգամ մաքրված ե:

ԱՎՈ.—Հոգի ուրախացնելու համար: Ախ, Բողոլը շիտակ ընկեր
ես: (Բերում ե բաժակներ, կտրում ե հացը, ածում ե) Խմենք
մեր դարդից: (Խմում են):

ԳԱՍՊԱՐ.—Ո՞խ. Ի՞նչ լավ խում ունի: Պետականից յետ չի մնում:
Ածիր մեկ ել:

ԱՎՈ.—Ել ի՞նչ ե պիտք: Դատարկվիր, չաշկա, պտավիր, բաշկա:
(Խմում են ևս խմում: ամենից շատ խմողը Ավոն ե):

ԲՈՂՈԼ.—Ես բոլորը դատարկ բան ե: Դուք ասեք ի՞նչ անենք:
Չե վոր եկուց գնալու ի՞նք:

ԱՎՈ.—Գնալու ի՞նք...

ԲՈՂՈԼ.—Ել յետ չենք գա: Մեզ կնսակցնեն:

ԳԱՍՊԱՐ.—Այս, պրծնիլ չկա և եղ բոլորը քո քածի յերեսից:

ԱՎՈ.—Կարծում ես, վոր իմ սրտովն ե: Մարդ ել կնկա յերեսից
բանա նստի: Խայտառակություն ե: Այ, նստած մտածում եմ,
մտածում, յելք չեմ գտնում: Ուրիշ ժամանակ լիներ, թվում
ե, թե յես նրան կտոր-կտոր կանելի, իսկ հիմա, ասես բա-
րացել մնացել եմ: Կնիկը վկայի, մարդը բանա նստի: Այ,
հայ.. Թինւ: Ախը յես ինչո՞ւ սոմուսնացա:

ԳԱՍՊԱՐ.—Ո՞խ, Ավիկ, բանն ես չի, վոր Կնիկդ ալլանդակ ե,
այլ խելքն և ալլանդակ: Չես լսում, չե վոր ասում եկինք ծի-
ծիր: Ծեծ չի հասկանում, սպանիր: Եղ մի շատ հասարակ
բան ե: Թեեն կինարամար ցատկան ե կատվի պես, բայց
նրա վլիսից մարդու բուռնցքն անպակաս պիտի լինի, ինար-
կե, յեթե մարդը մարդ լինի և վոչ փալաս: Ծեծելով նրան
ճերքի պիտի բերես: Յեթե զու նրան մեր ասածի պես ձմեռ-
վանից ձեռք առնելիք, մինչեւ գարուն հասնելը սատկած կի-
ներ: Սատկողի ճամբեն չես բոնի, փեշից չես բաշի:

ԱՎՈ.—Հիմա յել եղ ճամբեն բաց ե...

ԲՈՂՈԼ.—Մի փորձիր: Դու հիմա չես համարձակվի նրա վրա ձեռք
բարձրացնել:

Ա.Վ.Ո. — Այն ել չես:

ԲՈՒԴՈԼ. — Այս, դու: Ավելի շուտ նա քեզ կծեծի և դու ծպտուն չես կարող հանել:

Ա.Վ.Ո. — (Կոնճելով բաժակը): Հիմա յես քո քիթ ու մոռոքն ել կջարգիմ, ուր մնաց նրա:

ԲՈՒԴՈԼ. — Իմ քիթ ու մոռոքը ջարգելու համար նա դեռ կարող և քեզ գովել, բաց նրանը չես համարձակվի:

Ա.Վ.Ո. — Կհամարձակվեմ... Կհամարձակվեմ:

ԳԱՍՊԱՐ. — Վիճելուն վերջ տվեք: Գործը շատ և լուրջ: Յեթե Ահնան դատարան գա, պարզ ե, վոր յերեքիս ել բանտ կտանեն: Յեթե նրան մեջտեղից վերացնենք, այն ժամանակ, թվում ե, վոր մի կերպ կպրծնենք: Մեզ մեղադրող չենք ունենա: Նրան մեջտեղից վերցնելը բոլորի համար խրատ կլինի, պոչերն իրենց կրաշեն, թե չե շատ առաջ գնացին: Այքեզ եմ ասում, Ավելի, ինձ լավ լսիր, միենուքնն ե, զուրբան ե. Ահնան քո կինը չի, քո կինը, այլ քեզ թշնամի յի, թշնամուց ել վատ: Քեզ բանտ և նստեցնում և դու նրա գլուխը պիտի աղես, հաշիվը վերջացնես: (Յածր ձայնով): Միայն խելացի կերպով և շատպ և այս ևսպէս, հիմա նա խսկուն կդա: Հետը վեճի բռնվիր, հետո վեճը կովի փոխիր և փալտով գլխին, և ամեն ինչ վերջացած ե, կասես ընտանեկան վեճ եր, խփեցի, մեռավ, Մենք վկաները չենք: Կասենք մեզ մոտ կովը ծագեց, կինս ուղում եր դանակով խփել դաշլիս ե: (Ավելի լոել ե): Զլինի վախեցար:

ԲՈՒԴՈԼ. — Ավչի Ավոն հավ և գարձել: Ել ի՞նչ տարակուսանքի մեջ հս... Մենք ել թղթին ձեռք կդնենք... չենք թողնի կորչես...

Ա.Վ.Ո. — Ափսոսում եմ:

ԳԱՍՊԱՐ. — Բա դու ափսոս չես: Մենք ափսոս չենք: Արի բանտ նստի, ունեցածդ ել զրավեն:

Ա.Վ.Ո. — Կարծնում ես...

ԳԱՍՊԱՐ. — Ինձրկեւ Յերկու ջուխտ լծկան և ձեռք բերել և կարծում ե չես խլի: Հենց կարմիր յեղից կոկեն:

Ա.Վ.Ո. — (Խփում ե բռունցքով): Վհչ, սուս ես խոսում, կարմրիս ձեռք չեն տա: Կսպանեմ... Վոչ, չեմ տա:

ԲՈՒԴՈԼ. — Ինչպես չի: Զե վոր նրան այս գարնանը գնեցիր: Կարծում ես, Շողերը չգիտի, թե ի՞նչ փողով ես առել: Նրա առաջին գործը եղ կինի ասելը:

Ա.Վ.Ո. — (Բղավիլով): Զի համարձակվի, յես նրա բուկը կբռնեմ: Յետ կարմրիս ձեռքից հանողը չեմ:

ԳԱՍՊԱՐ. — Կիւն, կիւն:

Ա.Վ.Ո. — Թուլլ չեմ տա: Կսպանեմ ու ձեռքից չեմ տա: (Դուռը բացվում ե, մենում ե Աննան, աչի տակով նայում ե խմողերին, գլխիս ե սեղանի մոտ, բլրերը դնում ու նստում ե):

Ա.Վ.Ո. — (Նաև կամացով): Թուլլ չեմ տա:

ԲՈՒԴՈԼ. — (Նույկով): Վախեցավ...

ԳԱՍՊԱՐ. — (Նույկով): Այ դու կնիկ, շեկ կովը քեզ կթողնեն...

Ա.Վ.Ո. — (Թափահարում ե ձեռքը նրանց վրա, վերցնում ե ծանուցագիրը յեվ գնում ե դեպի կինը: Տարով ծանուցագիրը): Թուլլ տվեք ներկայացնել:

Ա.Ն.Ա. — Ի՞նչ բան ե:

Ա.Վ.Ո. — Ծանուցագիր ե: Դատարան են կանչում ձեր ամուսնուն դատելու:

Ա.Ն.Ա. — Արդեն գիտեմ...

Ա.Վ.Ո. — Յեվ շատ գոհ եք: Հասմաք ձեր ուղածին:

Ա.Ն.Ա. — (Նարմելով ձեռք): Ի՞նչ հասնել, չեթե մի գիտենալիր ինչպես սիրաս ուտում և վիշտը:

Ա.Վ.Ո. — Սիրտղ ուտում ե վիշտը, ցավդ տալիս ե, ինչպես չի:

Ա.Ն.Ա. — Այս, վիշտը սիրտս կերավ, կերավ, երնեկ թե անգրագիտացի, բան չինչի, բան չիգելի... Կուլյերը բախտավոր են, քան թե աչք ունեցողները: Գրագետ լինելով հասկացա արդարությունը, ամեն բանից վեր սիրեցի նրան և չեմ կարողանում նրանից ձեռք քաշել:

Ա.Վ.Ո. — Հիմա վիտես ինչ, Անոն, չեկ եղ բոլորը թող:

Ա.Ն.Ա. — Ի՞նչ... Կուլյերի պիս աչքերս խփեմ և ինձ խարեմ: Վոչ, եղ արգեն ուշ ե, սկսել եմ, ել յետ չեմ կանգնի: Կհաղթեմ: Մակից դուրս կգամ, վշտին ել կհաղթեմ: (Մասենում ե մլուս կամ կամ կամ կամ): Ամենին կհաղթեմ: Մի հարցնող լինի, ինչու յեկել: Են ել արագով: Լակելու, Ավոյն հարբեցնելու: (Բոլոյն ու Գասպարը տեղերից վեր են կենում): Կորեք ալսաւելից, Համշկուտից ձեղ կավլեմ, գուրս կլցնեմ, իզ ու թողերդ կկտրեմ, աղան, անկուշտ ակուավեր:

ԲՈՒԴՈԼ. — Քեզ ավելի շուտ կավլենք:

ԳԱՍՊԱՐ. — (Ավոյնին): Ավո, դու չես ես առա տերը: Մենք քեզ մոտ ենք յեկել, մեզ այստեղից վանդում են:

Ա.Վ.Ո. — (Աննային): Դուր եղ ի՞նչ շատ...

ՄՆԱԱ.—Կամ յես, կամ նրանք:

ԳԱՍՊԱՐ.—Հո մենք կնիկ չենք, զոր թեշիկ մանենք, կով կթենկ
Ա.Վ.Ո.—Լոկ: (Դեպի կինը): Իսկ դու քեզ մի մոռանաւ: Յես քետուն եմ բերել առանց ոժիտի, ուզենամ և դուրս կանեց իմ գլխի տերը չես, հերիք և եսքան համբերեցի, Խրակամ քեզ: (Պատառում է երա վրայի կոթենի յեվ նարված եւ)

ԲՈՂՈԼ.—Տուր, տուր զբան: (Հարձակվում ե, յեվ Ավոյի նետ ծեծու են Աննային: Կասպարը վերցնում է հացի դանակը յեվ խփան Աննային, վորն ընկնում է գետին):

ԲՈՂՈԼ.—Վերցնում է փայտի կտոր վառարանի մոտից, տալիս Ավոյի ձեռքը յեվ առում ե) Խփեր, տուր գլխին:

Ա.Վ.Ո.—Ելում է փայտի կտորը, ոգում է խիմել յեվ նույն դիրքուարտած ասում ե): Արյուն... Մտիկ, արյունը: (Դեն է զցու փայտի կտոր՝ յեվ ծունկ է չոքում): Ես ի՞նչ բան ե... Արյուն ես ինչպէս լեղավ: (Փորձում է ձեռքերով): Այս, արյուն ե... Յեզ չի շնչում... Սպանեցինք: (Բարձրացնելով ձեռք): Մատներս արյունոտվել են...

ԳԱՍՊԱՐ.—Դեռ ելի՞ արյուն չինի, դանակով խփեց, բա արյուն... Ա.Վ.Ո.—Դանակով: Ո՞վ դանակով:

ԳԱՍՊԱՐ.—Դեռ հարցնում ել ե: Ամբողջ կործքը արյան մեջ և դեռ հարցնում ե՞ ով:

Ա.Վ.Ո.—Են խաչը վկա՞ յես չեմ: Զեռքիս դանակ չի լեղել: Դանակ չեմ վերցրել.

ԲՈՂՈԼ.—Թող: Բանը բանից անցել ե. հիմա պետք և մտածենք ինչ անենք, վոր ծայրը կորչի, լիթե վոչ, մեզ ել վկաների կհասնի:

Ա.Վ.Ո.—Սպանեցինք, ալո, սպանեցինք:

ԳԱՍՊԱՐ.—Ել խոսելու, զատելու տեղը չի. Ինչպես վճռել ենք ենպես ել ցուցմունք կտանք: Վեճը ծագեց, դու խփեցի՞նա, Աննան դանակը վերցրեց, դու ուզեցիր խել և դանակ նրան կպավ: Գործը շատ պարզ ե:

Ա.Վ.Ո.—Եղ յես խփեցի: Յես դանակ չեմ բռնել... Վոչ... Դու, դու խփեցիր:

ԳԱՍՊԱՐ.—Յես... Ինչու յս ինձ խառնում եղպես կործի մեջ Առաջ, առաջ ձեր մեջ վեճ ծագեց, բանը կովի հասավ, դու խփեցիր, եղ գոչինչ, դրա համար վոչինչ չի լինի, իսկ լիրի բորդի համար, այ զուղնախագահը, նա տեսավ, վոր դու դանակը ճխտեցիր և հետո յել փայտի կտորը վերցրիր:

ԲՈՂՈԼ.—Ճիշտ ե... Յես տեսա, յես վկա յեմ...

ԳԱՍՊԱՐ.—Ինչ լավ, վոր եղպես ե: Ինչու յեք ուրիշին գործի մեջ լսառնում: Ձե վոր ինձ ել Բողովին ել մարդասպանի տեղ կդնեն և թղթակցունու համար կկախեն, իսկ քեզ ի՞նչ կա: Բոլորովին ուրիշ բան ե: Վորովինու դու ամուսին ես, ինչ աշխակատար երավունք ունիս կնկանդ խրատելու. ե, ինչ աշխանք, կափի ժամանակ փորձանք ե, իզեկ ե: Եղպես ել դատարանում քեզ կարդարացնես: Մենք հիմա քեզ ձեւի համար կրանտարկենք:

ԲՈՂՈԼ.—Կրանտարկենք սառցատանը, իհարկե, որենքին ցուց տարու համար, իսկ դատարանը գործը կքննի և քեզ կազմուի:

Ա.Վ.Ո.—Այդ ինչպէս ինձ կբռնեք և բանտ կուզարկեք: Յես զրան համաձայն չեմ: Յես համաձայնությունս չեմ տալիս: (Նիդրված չորս կողմեն ե նայում): Ախր ես ի՞նչ լեղավ: Անտառ առնենք, ինչ անենք:

ԳԱՍՊԱՐ.—Միենուչն բանն ե, կրացվի, ավելի վատ կլինի, իսկ այստեղ կովի մեջ և պատահել, խանդից, մենք վկա յենք:

Դու մի տարակուավի, ինչպես պետք ե, մենք ցուց կտանք: **ԲՈՂՈԼ.**—Ել ի՞նչ ես պոչդ թափ տալիս: Բոլորն ել գիտեն, վոր գուք իրար հիտ լավ չելիք ապրում: Պետք ե մարդ կանչենք, ուրիշ վոչինչ:

Ա.Վ.Ո.—(Երեն կորցրած) Աստծուց վախեցիք, ինքներդ սպանեցիք, ինձ վրա յեք ցցում: Դուք մկրտված հայ-քրիստոնյա չե՞ք:

ԳԱՍՊԱՐ.—Այսո, ավազան ենք մտել, լավ հայ-քրիստոնյա յենք... (Մարքան լաց լինելով վազում է դեպի դուռը յեվ ուզում ե իրեն դուրս զցի):

ԳԱՍՊԱՐ.—(Բոնելով Մարքալին) Կանգնիք, քավթառ, ուր ես գնում...

ՄԱՐԹԱ.—(Ուզում ե պոկ գալ ու նշում ե): Ախ, դուք հոգիկուրանքներ, անիծվածներ: Յես բոլորը տեսա, բոլորը լսեցի: Տեսա, թե ինչպես դանակը ճխտեց: Մի վախենար, վորդիս: յես քո վկան եմ:

ԲՈՂՈԼ.—Ախ դու անիծված ջաղու:

ԳԱՍՊԱՐ.—Թող, մի ուշունց տա: Եղ լավ ե, վոր Մարթա դու տեսար ամեն ինչ:

ՄԱՐԹԱ.—Թե վոր լավ ե, դե ինձ բաց թող:

ԳԱՍՊԱՐ.—Սպասիք. Ավոյից դու լավ կհասկանաս:

ՄԱՐԹԱ. — Գլուխս մի յեղի, մի յեղի. ոճն հլ ինձ չի խարի. կա
ժամանակ, վոր կինարմատը հիմար եր, իսկ հիմա հզպիսի
չես գտնի:

ԳԱՍՊԱՐ. — Դեհ զու լսիր:

ՄԱՐԹԱ. — Ախր ինչ լսեմ...

ԳԱՍՊԱՐ. — Այ թե ինչ: Դու յերլորդ վկան կինես. ցուց կտաս
վոր նա, Աննան կոի գցից:

ՄԱՐԹԱ. — Աննան կոի գցից ցցից. ե, ով եք հավատացողը: Դու
վորդիս, սրանց մի լսիր, քեզ կիսորտակն, քեզ կիսորտա
կն: Արալը ով բերեց: Յես տեսա, լսեցի, ինչպես ք
խմցրին, զլուխտ յեղեցին, քեզ խարեցին: Դատարանը մե
զավորն ու արդարը կը զու:

ԳԱՍՊԱՐ. — Դատարանը: Յես քեզ դատարան ցուց կտամ: (Բը ը
նում ե պառակի բիից) Խեղդիր դրան, խեղդիր, բողով, ոգ
նիր: (Բողովն ոգնուքան ե հասնում: Ավոն անշարժ կան
նած ե):

ՄԱՐԹԱ. — (Պատապանվելով) Ախ, զուք... խեղդիր եք ուզում
հոգհապաններ, մարդասպաններ: Վորդակ, վորդակ: Կնոջ
սպանցին, մորդ սպանում են: Ոչ, ոչ, ոչ:

Ա.Վ.Բ. — (Դասպարփին) Բաց թող, կորիր:

ԳԱՍՊԱՐ. — Լոմիր, զոնմ:

Ա.Վ.Բ. — Դու լսիր, մարդասպան: (Վազում ե նրացանին յեվ բա
ւում ե ծիծիկը): Բաց թող սպառավին: Քաշվիր, թե չե կը
խփեմ: (Բողովն ու Դասպարը վազում են դեպի դառը
գուալով): Սպանեց, սպանեց: (Դրսից նրանի կրանչում են)
Սպանեց, սպանեց, հասեք, հասեք:

Ա.Վ.Բ. — (Նիսրիած նայում ե) Սպանեցին... ես ինչ բան յեղավ.
Դանակով ծակեցին...

ՄԱՐԹԱ. — Փորձանք եր, յեկավ: Դուները բաց արա, բաց, չոքիր
և մեղքդ քաղիր.

Ա.Վ.Բ. — (Հացաներ վեր ե դնում, չինում ե դիմակի մոս) Յես չեմ
ուզում: Մարդիս չեր անցնում, են խաչը վկա, յես սպանե
լու մտազիր չեմի... յես չարացած եմ յեղել ո, սպանել...
ինչ սպասափիր բան: Զե վոր սիրում եմի... (Վողոցից լրս
վում ե աղմուկ, սղալակի):

ՄԱՐԹԱ. — Մի վախի, վորդիս: Զզջա, մեղքդ քավի, իսկ յես
ըոլորը կպատմեմ... (Ներս են մտնում մի բանի պատանիներ,
նրանց հետ յեվ բողովը՝ զյու դնախազանիք):

ԲՈՂՈՅՆ. — Կապիր, կապիր մարդասպանին:

I **ՊԱՏԱՆԻ.** — Սպասիր: Մի նայենք նրան, գուցե շնչառպառ և
յեղել... ջուր տվեք: (Թեմվում ե յեվ սնտղում): Վոչ, չի շըն-
չում:

II **ՊԱՏ.** — Ել վորտեղ... Դանակը սրտի տակն ե զարկած: (Թեմվի
Ավոն) Ախ, զարշելի, սպիրտի հոտն ինչպիս փշում ե, ասես
միկիատն լինի: (Եղ ժամանակ ներս են լցվամ գեղջուկ-գեղջ-
կունիները, բայորը բացականչելով ախ են բաւում): Սպանել
ե: Ախ եղ գայլը: Հեշտ բան ե դանակով: Արյուն, արյուն:
Ա.Վ.Բ. — (Ծնկաչով) Ներհցեք, ի սեր աստծո, մեղավոր եմ... մե-
ղավոր...

I **ՊԱՏ.** — Տեսնո՞ւմ ես, աստվածապաշտ դարձավ... զուք ըոլորդ
եղակն շան վորդիր եք:

II **ՊԱՏ.** — Ինչո՞ւ համար սպանեցիր: Ինչո՞ւ խորտակեցիր եղակիսի
լով մարդուն:

Ա.Վ.Բ. — Մեղավոր եմ... Թուլլ տվի... Յես չեմի սպանում:

I **ՊԱՏ.** — Ինքն իրեն սպանեց: Ինքն իրեն մորթեց (Բոնելով ս
ձիից) Վեր կաց: Չեռքերը յետեից կապիցեք (Ավոն վերկա-
ցավ):

ՄԱՐԹԱ. — (Առաջ զալով) Վոչ, սպասիր, ինձ լսիր... բանն ինչ-
պիս յեղավ... Դասպարն սպանեց նրան:

ԲՈՂՈՅՆ. — Ի՞նչ ե ասում... կապիր մարդասպանին. յես իշխանու-
թյունն եմ և նրամացում եմ, կապիր նրան, ել ուրիշ վո-
չինչ:

ՄԱՐԹԱ. — Վոչ, բարի մարդիկ, զուք ինձ լսեցեք, յես սպասկած
եմի, ամեն ինչ լսեցի: Գասպարը և Բողովը յեկան, արադ
բերին և Ավիկին գլխից հանեցին: Ասում եմին՝ զու միայն
կուիլ սարքիր և մեզ մի խանգարիր: Հենց վոր Աննան ներս
մտավ, նրանք հարձակվեցին վրան: Ավիկի ձեռքին վոչ մի
բան չկար: Գասպարը դանակով, իսկ Բողովը փայտի կտո-
րով:

ԲՈՂՈՅՆ. — Ստում ես, յես չեմի ինքում:

ՄԱՐԹԱ. — Ինչպիս թե չեմիր խփում...

ԲՈՂՈՅՆ. — Փախտ վերցնելը վերցրի, բաց չխփեցի:

I **ՊԱՏ.** — Այ թե ինչ...

II **ՊԱՏ.** — Ես սրանց ըկումը ձկան փուշ եր զարձել: Իսկ ուր ե
Գասպարը:

I **ՊԱՏ.** — Բաշ տվեք նրան այստեղ:

ԲՈԴՈԼ.—Եղ ի՞նչ որենքով. Գասպարը գործի հետ կապ չունի
Յես ևմ իշխանությունը...

II ՊԱՏ.—(Բոնելով Բոդրի կրծից) Յես քեզ իշխանություն ցուց
կտամ. Խոստովանիր, մարդասպան... Քաշ տվեք Գասպա-
րին...

ՊԱՏԱՆԻԵՆԵՐ.—Եւ ի՞նչ եք նայում... Բոնեցեք (Դուրս են վա-
զում):

ԲՈԴՈԼ.—(Երանց յետ տալով) Դուք ում եք բռնում, յես ևմ գյուղ
նախագահը:

ԱՄԲՈՒԽԻ ՄԻԶԻՑ.—Կուլակ, թալանչի, Դրան պինդ բռնիր (Մի-
քանիսը բռնում են Բոդրին):

I ԱՂՋԻԿ.—Նրանք... Անպատճան նրանք սպանեցին Անոլին:

II ԱՂՋ.—Եղպիսի մարդուն սպանել. Մեր Ղամշկոտում իր գյուղ
դարձած որից այսպիսի կիս չեր չեղել: (Դեպի Ավոն) Եղ
պիսի կինը քեզ համար պարծանք եր, բայց դու նրա պա-
տիվը չիմացար... տվիր սպանեցիր...

ՃՈՂԵՐ.—(Ներս վագելով) Այ ձեզ մատադ, ես ի՞նչ բան ե... սպա-
նել են... սպանել: Եւ դու, Ավա, կատաղեցիր... Ինչու դու
նրան... Եղ կաքավին, մեր պաշտպանին... և ի՞նչպես ձեռ-
քըդ նրա վրա բարձրացավ:

ՄԱՐԹԱ.—Սպանողը նա չի, Գասպարն ե... ուզում եր ինձ ել
սպանել: Յես գեպի զուռը վոր վազեցի իմաց տամ հարեւան-
ներին, Գասպարը և եղ Բոդոլը բռնեցին ինձ և են և խեղ-
դում եին. յեթե Ավոն զոռով նրանց ձեռքից չառներ ինձ...
Հրացանով պաշտպանեց...

ՄԻ ՌԻՄՇ ՊԱՌԱՎ.—Տեսնում ես, ախ դուք հոգեսպաններ... և
քեզ...

ՃՈՂԵՐ.—Այս, դուք բոլորդ սատկիլիք, միայն թենա սադ մնար:
Այս, ինչ խելոք խելացին եր...

ԶԱՅՆԵՐ ՓՈՂՈՑԻՑ.—Բոնել են, Գասպարին բռնել են:

ԱՄԲՈՒԽԻՑ.—Բերում են, բերում են: Տեսէք ի՞նչ համառն ե...

III ՊԱՏԱՆ.—Դեպի բռստաններն եր ճղում... Հազիվ յետելից հա-
սան...

I ՊԱՏԱՆ.—Ի՞նկամ... Արադի տկձոր...

ԳԱՍՊԱՐ.—Ի՞նչ ընկամ... Ավոն կնկան մորթի, բռնվողը Գասպա-
րը լինի... Յես եստեղ ի՞նչ եմ...

III ՊԱՏ.—Վոր ինչ չես, բա ի՞նչու փախար:

ԳԱՍՊԱՐ.—Վախեցա փախա... արլուն տեսա և վախեցա:

II ՊԱՏ.—Արլուն տեսար, վախեցար, այ վախեկոտ: Իբրև թե եղ
արլուն թախողը զու չես... Առաջ արի, առաջ, ի՞նչ ես կախ
ընկել... (Ճղում ե նրա ժապիկը) սրան մեր ձեռքով գա-
տաստան: Զարդեք սրան...

ԱՄԲՈՒԽ.—(Ուաջ շարժիղով) Սպանենք, սպանենք:

I ՊԱՏ.—Եղ ի՞նչ եք ասում... Սպասեցեք... Եղպես բան չա-
նեք... Մեր ձեռքով դատաստան անել չի կարելի... Խոր-
հրդային իշխանության որինքով պիտի դատել: Մեղավորին
որենքը կպատժի...

ՀԱՄՊՈ.—(Ներս ընկնելով) Սպանեցին... Այս դուք անիծված
կուլակներ... Նա սրանց բիին ձկան մեծ փուշ եր դարձել...
գլուխը կերան...

ՃՈՂԵՐ.—Անո, Անո, առանց քեզ մենք ինչպես պիտի ապրենք:
Դու մեզ ում հույսով թողիր ու գնացիր...

ՀԱՄՊՈ.—Զայնդ մի բարձրացնի. Նրան սպանեցին, իսկ աշխա-
տանքը չեն սպանի: Մենք սարի պիս կանգնած ենք չքա-
վորությանին կոնակը:


II ՊԱՏ.—Ճիշտ ե... Բայց եղպիսիներին պատառուտենք, վոչն-
չացնենք...

ԱՎՈ.—Ավելի լավը և ինձ սպանեք, յես կթեթեանամ... Ինձ
սպանեցեք... Ինձ, ինձ...

ՀԱՄՊՈ.—Սպասիր: Մեր ձեռքով ինքնազատաստան անելը չի
թույլ տրվում... Դրա համար պրոլետարական զատաս-
տան կա: Եսպես զործի համար խնայել չկա, խիստ պատ-
ժում են: Մարմնի մոտից հեռացիր: Զեռք չտալ մինչև քննի-
չի զալը, իսկ եղ բոլորին կապեք և վրաները պահապան
դրեք: Տեսնում եք ինչ արին... Մեր զատած ճրագը մարե-
ցին: Սակայն սպասիր... Մենք հազար ու բյուգ ճրագներ
ենք վառում... Հանգցնել չի լինի...

ՎԱՐԱԳՈՒՅՐ







ԳԻՒԸ ՅՈՒ ԿՈՊ.

122

4



9981